

Արձանագրություն 6

2014 թ. սեպտեմբերի 6-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի հերթական նիստը՝ նախագահությամբ Ռ. Հակոբյանի, քարտուղարությամբ՝ Թ. Ասոյանի:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 35 անդամներից 28-ը:

Օրակարգ՝

1.ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 2013-2014 ուստարվա գործունեության հաշվետվություն և 2014-2015 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/ զեկ՝ ԲՖ դեկան Թ.Ասոյան /

2.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի 2013-2014 ուստարվա գործունեության հաշվետվություն և 2014-2015 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/ զեկ՝ ԲՆՖ դեկան Մ. Ավագյան /

3.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի ֆիզիկամաթեմատիկական և քիմիական գիտությունների ամբիոնի լուծարման ու ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոնը ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վերակազմակերպման մասին:

/ զեկ՝ ԲՆՖ դեկան Մ. Ավագյան /

4. Ընթացիկ հարցեր:

Օրակարգի 1-ին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ բանասիրական ֆակուլտետի դեկան Թ. Ասոյանը: Զեկուցողը նշեց, որ ուսումնական գործընթացը կազմակերպվել է համաձայն ուսումնական պլանների և հաստատված ժամանակացույցի: Նախ անդրադարձ կատարվեց ուսանողական համակազմի համալրման խնդիրներին, ապա ներկայացվեցին ուսանողների առաջադիմության ցուցանիշներն ըստ բաժինների: Այնուհետև նշվեցին այն աշխատանքները, որոնք տարվել են ամբիոնների, ուսանողական ինքնակառավարման մարմինների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ: Ուշադրություն դարձվեց կազմակերպված միջոցառումներին, ուսանողների մասնակցությանը հանրապետական ուսանողական գիտաժողովին, որոնք նպաստում են ուսանողների գիտական հետաքրքրությունների շրջանակի ընդլայնմանը,

ունենում են բարոյա-հոգեբանական դրական ազդեցություն: Թ. Ասոյանը ներկայացրեց նաև 2014-2015 ուստարվա զարգացման հայեցակարգը:

ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի 2013-2014 ուստարվա գործունեության հաշվետվությունը ներկայացրեց ֆակուլտետի դեկան Մ. Ավագյանը: Նա նշեց, որ ուսումնական գործընթացն ընթացել է ըստ ժամանակացույցի, իրականացվել են զարգացման հայեցակարգով նախատեսված աշխատանքները: Զեկուցողը ֆակուլտետում կատարված աշխատանքները ներկայացրեց ըստ բաժինների: Ուսումնական գործընթացը, ուսանողների առաջադիմության հետ կապված հարցերը ներկայացվեցին կիսամյակների համեմատական վերլուծության միջոցով: Ուշադրություն դարձվեց ամփոփիչ ատեստավորման քննություններին, ուսանողների ցուցաբերած գիտելիքների որակին, կրթության արդյունավետության բարձրացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներին: Նշվեց, որ որոշակի ձեռքբերումներ կան գիտահետազոտական ուսումնասիրությունների ոլորտում, որտեղ ներգրավված են նաև մագիստրատուրայի ուսանողները: Կազմակերպվել և անցկացվել են բազմաբնույթ միջոցառումներ: Այնուհետև Մ. Ավագյանը ներկայացրեց ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի 2014-2015 ուստարվա զարգացման հայեցակարգը:

Բնագիտական ֆակուլտետի դեկան Մ. Ավագյանը, ներկայացնելով ֆակուլտետում ստեղծված իրավիճակը, հաշվի առնելով ուսանողական համակազմի թերհամալրումը նոր ուստարում և այլ հանգամանքներ, առաջարկեց լուծարել ֆիզիկամաթեմատիկական և քիմիական գիտությունների ամբիոնը, որը շրջանավարտներ թողարկող ամբիոն չէ՝ այն միացնելով ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոնին՝ վերջինս վերակազմակերպել որպես ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոն: Հարցի շուրջ ծավալվեց քննարկում, որի արդյունքում առաջարկը հավանության արժանացավ:

Գիտխորհրդում քննարկվեց ԳՊՀ տնտեսական գծով պրոռեկտոր Ա. Ապրոյանի և գլխավոր հաշվապահ Գ. Մուրադյանի առաջարկությունը Գավառի ինդուստրիալ-մանկավարժական քոլեջի, պրոֆտեխուսումնարանի նախկին աշխատակիցներին, ԳՊՀ շրջանավարտներին և այլ դիմումատուների արխիվային փաստաթղթերով, տարաբնույթ տեղեկանքներով ապահովելու մասին: Նշված աշխատանքները չեն բխում բուհի կանոնադրական խնդիրներից և մինչև հիմա կատարվել են անվճար հիմունքներով՝ օգտագործելով մարդկային ռեսուրսներ, նյութական միջոցներ և կրելով չնախատեսված ֆինանսական ծախսեր: Առաջարկվում է նման ծառայությունները դարձնել վճարովի ԳՊՀ

ուսանող, դասախոս և աշխատակից չհանդիսացող դիմումատուների համար, քանի որ այդ ծախսերը հիմնավորված չեն և որևէ աղբյուրից չեն փոխհատուցվում: Առաջարկը քննարկվեց և ընդունվեց:

Հիմք ընդունելով հաշվետվությունները, ելույթներն ու առաջարկությունները՝ գիտխորհուրդը

Որոշեց՝

1.ԲՖ դեկան Թ. Ասոյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2.Հավանություն տալ բանասիրական ֆակուլտետի 2014-2015 ուստարվա զարգացման հայեցակարգին:

3.ԲՆՖ դեկան Մ. Ավագյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

4. Հավանություն տալ բնագիտական ֆակուլտետի 2014-2015 ուստարվա զարգացման հայեցակարգին:

5.Լուծարել ԲՆՖ ֆիզիկամաթեմատիկական և քիմիական գիտությունների ամբիոնը:

6.ԲՆՖ-ում ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոնը վերակազմակերպել ինֆորմատիկայի և Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի:

7. Արխիվային փաստաթղթերի, տեղեկանքների, դիպլոմների և միջուկների կրկնօրինակների տրամադրումը Գավառի ինդուստրիալ-մանկավարժական քոլեջի, պրոֆտեխուսումնարանի նախկին աշխատակիցներին, համալսարանի շրջանավարտներին, ԳՊՀ ուսանող և աշխատակից չհանդիսացող այլ դիմումատուների դարձնել վճարովի՝ ժամանակային և գնային հետևյալ չափանիշներով.

ա/ փաստաթղթերի տրամադրում 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ 3000 ՀՀ դրամ /ներառյալ ԱԱՀ/

բ/ փաստաթղթերի տրամադրում 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ 4000 ՀՀ դրամ /ներառյալ ԱԱՀ/

գ/ փաստաթղթերի տրամադրում 1 աշխատանքային օրվա ընթացքում՝ 5000 ՀՀ դրամ /ներառյալ ԱԱՀ/

դ/կորցրած դիպլոմի և միջուկի կրկնօրինակների, կորցրած կամ վնասած պրոքսիմիլային քարտերի փոխարեն նորի տրամադրման համար, իրենց քարտերն այլ անձանց փոխանցելու դիմաց գանձել 5000-ական դրամ /ներառյալ ԱԱՀ/

Գիտխորհրդի նախագահ՝ Ռ. Հակոբյան

Գիտքարտուղար՝ Թ. Ասոյան